ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ԳՀԱՊՁԲ-21-22/2-1

ք. Երևան «29» 04 2021թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Ս. Սահակյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Գնորդ), մի կողմից, և Ա/Ձ Ցոլակ Գևորգյանը (այսուհետ՝ Վաճառող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի:

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 8 850 000 (ութ միլիոն ութ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է 15 բանկային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ քան 10.12.2021թ:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված հինգ աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում: 6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն

հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 12 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.13 Պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ԶՈՒ ՀԶ և Հ վարչությունը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	Ա/Ձ Յոլակ Գևորգյան
ք. Երևան Բագրևանդի 5	ՀՀ.ք. Երևան, Նազարբեկյան թաղ. 31Ա շ., բն. 6,
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
Հ/Հ 900011024537	Հ/Հ 163028012686
ՀՎՀՀ 02522157	ՀՎՀՀ 27847811
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ	
Ա. ՍԱՀԱԿՅԱՆ	Ց. ԳԵՎՈՐԳՅԱՆ

Հավելված N 1
N ԳՀԱՊՁԲ-21-22/2-1 պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ- ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/Հ	Անվանումը	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը
1	Արկղեր (ՊԳ-1 համացույցի արկղ)	Արկղը նախատեսված է ՊԳ-1 համացույցի, ինչպես նաև Կ-1 կոլիմատորի հուսալի տեղափոխման համար: Այն պետք է պատրաստված լինի 0,6-0,8 մմ հաստությամբ մետաղյա թիթեղից: Արկղը բաժանվում է 2 մասի՝ վերին և ներքին: Վերին մասը ծառայում է որպես կափարիչ և ներքին մասի հետ ամրացնելու համար ընդերկայնական մի կողմում ամրացված են ծխնիներ՝ բացել և փակելու համար, իսկ ընդերկայնական մյուս կողմում ամրակված են 2 փականներ: Ձեռքով տեղափոխելու համար առջևից պատրաստված է երկաթյա ծալվող բռնակ: Արկղի չափսերն են՝ -երկարություն 335մմ, -բարձրություն 160մմ, -լայնություն 173մմ: Տուփի ներսում կահավորված են փայտե կամ փրփրապլաստե դետալներ՝ համացույցի, կոլիմատորի, կոլիմատորի լուսավորման մալուխի և սրվակների հուսալի տեղադրման համար: Դետալ 1: Իրենից ներկայցնում է փայտե, 91x29x14մմ չափսերով ուղղանկյուն պատկեր: Աջ եզրից 10մմ, ներքևից 6մմ տարածության վրա 25մմ սկզբնական շառավիղով ներփորված է կիսագունդ՝ կոլիմատորի գնդիկավոր կրունկի հենման համար, այն ամրացված է տուփի կափարիչի ձախից ներքևի անկյունում՝ ձախից 33մմ, ներքևից (կափարիչի ծալվող մաս) 11մմ տարածության վրա: Դետալ 2: Իրենից ներկայացնում է փայտե, 87x25x52մմ չափսերով ուղղանկյուն պատկեր, որի վերևից՝ կենտրոնից 65մմ տրամագծով արված է փորվածք, իսկ փորվածքի կենտրոնում 11մմ խորությամբ և 15մմ լայնությամբ կրկին արված է փորվածք՝ համացույցի հենման համար:  Դետալ 3: Իրենից ներկայացնում է փայտե 42 մմ տրամագծով 32 մմ բարձրությամբ գլան, որի կենտրոնում 30 մմ տրամագծով փորված է անցք և ամրացված է երկու փայտե ամրակներ՝ կոլիմատորի մալուխի գլխիկի ամրացման համար: Դետալ 3-ը տեղադրվում է մետաղյա 70մմ տրամագծով 54մմ բարձրությամբ գլանի մեջ, որն ամրակված է կափարիչի վրա՝ ներսի կողմից: Դետալ 4: Իրենից ներկայացնում է փայտե, 87x20x34մմ չափսերով ուղղանկյուն պատկեր, որի վերևից՝ կենտրոնից 59մմ տրամագծով արված է փորվածք, իսկ փորվածքի կենտրոնում 11մմ խորությամբ և 15 մմ լայնությամբ կրկին արված է փորվածք՝ համացույցի հենման համար: Դետալ 5: Իրենից ներկայացնում է փայտե, 173x19x80մմ չափսերով ուղղանկյուն պատկեր, որի վերևի մասից 33մմ հեռավորության վրա մոտ 45մմ երկարությամբ արված է կիսաշրջանաձև փորվածք, իսկ հակառակ ուղղությունից 46մմ բարձրության վրա մոտ 70մմ երկարությամբ ընդերկայնական հարթության վրա փայտը կտրված է, այնուհետև եզրից 20մմ հեռավորության վրա արված է կիսաշրջանաձև փորվածք: Դետալ 6: Իրենից ներկայացնում է փայտե, 70x40x20մմ չափսերով ուղղանկյուն պատկեր, որում ըստ բարձրության միջանցիկ փորված են 6 հատ գլանձև անցքեր: Դետալ 7: Իրենից ներկայացնում է փայտե, 93x19x80մմ չափսերով ուղղանկյուն պատկեր, որի վերնամասում փորված է կիսարշրջան, իսկ վերևից 37մմ դեպի ներքև և կողամասից 24մմ դեպի կենտրոն հեռավորությունների վրա ամրացված է 40մմ երկարությամբ և 22 մմ տրամաչափով գլան:

		   Դետալների այն մասերը, որոնք հպվում են (սեղմվում են) սարքերին, սոսնձվում են ռետինե կամ շորե կտորներ: Փայտե դետալները լաքապատվում են անգույն լաքով, իսկ արկղը ներսից և դրսից ներկվում է կանաչ պաշտպանիչ գույնի ԽՎ-518 մակնիշի ներկով:
2	Արկղեր (ՄՊՄ-44Մ ականանետային նշանոցի արկղ)	Արկղը նախատեսված է ՄՊՄ-44Մ ականանետային նշանոցի, ինչպես նաև Կ-1 կոլիմատորի հուսալի տեղափոխման համար: Այն պետք է պատրաստված լինի 0,6-0,8 մմ հաստությամբ մետաղյա թիթեղից: Արկղը բաժանվում է 2 մասի՝ վերին և ներքին: Վերին մասը ծառայում է որպես կափարիչ և ներքին մասի հետ ամրացնելու համար ընդերկայնական մի կողմում ամրացված են ծխնիներ՝ բացել և փակելու համար, իսկ ընդերկայնական մյուս կողմում ամրակված են 2 փականներ: Ձեռքով տեղափոխելու համար առջևից պատրաստված է երկաթյա ծալվող բռնակ: Արկղի չափսերն են՝ -երկարություն 335մմ, -բարձրություն 153մմ, -լայնություն 173մմ: Տուփի ներսում կահավորված են փայտե կամ փրփրապլաստե դետալներ՝ նշանոցի, կոլիմատորի, կոլիմատորի լուսավորման մալուխի և սրվակների հուսալի տեղադրման համար: Դետալ 1: Իրենից ներկայցնում է փայտե, 90x75x22մմ չափսերով ուղղանկյուն պատկեր: Ընդլայնական մի եզրից 11մմ, ընդերկայնական մի եզրից 6մմ տարածության վրա 48մմ սկզբնական տրամագծով ներփորված է կիսագունդ՝ կոլիմատորի գնդիկավոր կրունկի հենման համար, այն ամրացված է տուփի կափարիչի ծախից ներքևի անկյունում՝ ծախից 30±1մմ, ներքևից (կափարիչի ծալվող մաս) 11մմ տարածության վրա: Դետալ 2: Իրենից ներկայացնում է փայտե, 85x36x18մմ չափսերով պատկեր, որի վերևից՝ կենտրոնից 53մմ տրամագծով արված է կիսաշրջանաձև փորվածք, իսկ փորվածքի կենտրոնում 10մմ խորությամբ և 15մմ լայնությամբ կրկին արված է փորվածք՝ համացույցի հենման համար: Դետալ 3: Իրենից ներկայացնում է փայտե 61 մմ տրամագծով 33-34 մմ բարձրությամբ գլան, որի կենտրոնում 32 մմ տրամգծով փորված է անցք և ամրացված է երկու փայտե ամրակներ՝ կոլիմատորի մալուխի գլխիկի ամրացման համար: Դետալ 3-ը տեղադրվում է մետաղյա 70մմ տրամագծով 54մմ բարձրությամբ գլանի մեջ, որն ամրակված է կափարիչի վրա՝ ներսի կողմից: Դետալ 4: Իրենից ներկայացնում է փայտե, 165x74x23մմ չափսերով ուղղանկյուն պատկեր, որի վերևից՝ մի կողմից ընդերկայնական 75մմ չափով 30մմ խորությամբ կտրվածք է արված,

		այնուհետև՝ կտրվածքի կենտրոնից 40մմ տրամագծով՝ 15մմ խորությամբ արված է կիսաշրջանաձև փորվածք: Պատկերի մյուս հատվածի վրա փորված են անցքեր՝ պիտույքների պահպանման համար և պտուտակներով ամրացված են փայտե ծողիկներ: Կ-1 կոլիմատորը պետք է հուսալի տեղադրվի 2 և 4 դետալների վրա արված կիսաշրջանաձև փոսիկների մեջ, իսկ 1 դետալը պետք է ապահովի կոլիմատորի անշարժությունը՝ կափարիչը փակելիս: Դետալ 4-ի ներքևի ձախ մասում (կոլիմատորի կողքին) ամրացվում է 83x40x34մմ չափսերով կափարիչով փայտե տուփ՝ 2,5-3,5Վ շիկացման լամպերի պահպանման համար: Տուփի մեջ լամպերի պահպանման համար արվում են անցքեր: Դետալ 5: Իրենից ներկայացնում է փայտե, 100x76x40մմ չափսերով ուղղանկյուն պատկեր, որի վերևի մասից ուղղանկյունաձև և գլանաձև փորվածքներ են արված այնպես, որ հարմարավետ տեղադրվի ՄՊՄ-44Մ ականանետային նշանոցը: Դետալն ամրացվում է արկղի հատակում՝ 40-45° անկյան թեքությամբ: Դետալի վերնամասում և կողային մի մասում պտուտակներով ամրացված են 3 փայտե ծողիկներ (2-ը՝ վերնամասում)՝ նշանոցը տեղադրելուց հետո ամրացնելու համար: Դետալ 6: Իրենից ներկայացնում է փայտե, 55x45x45մմ չափսերով պատկեր, որի ներքին մասը 28մմ բարձրությամբ 45x45մմ չափսերով ուղղանկյուն է, իսկ վերին մասը, որը մի կողմով ներքին մասի շարունակությունն է՝ 27 մմ բարձրությամբ 18x45մմ չափսերով ուղղանկյուն է: Վերին մասի ուղղանկյան ընդերկայնական մասի ձախ կողմից 32մմ տարածությունից սկսած մինչև վերջամաս 20մմ խորությամբ կտրվածք է արված:   Դետալների այն մասերը, որոնք հպվում են (սեղմվում են) սարքերին, սոսնձվում են ռետինե կամ շորե կտորներ: Փայտե դետալները լաքապատվում են անգույն լաքով, իսկ արկղը ներսից և դրսից ներկվում է կանաչ պաշտպանիչ գույնի ԽՎ-518 մակնիշի ներկով:
3	Արկղեր (Հրետանային բուսոլի արկղ)	Արկղը նախատեսված է ՊԱԲ-2 (ՊԱԲ-2Մ, 2Ա, 2ԱՄ) շրջադիտակային հրետանային բուսոլի տեղափոխման համար: Այն պետք է պատրաստված լինի 0,9-1,2 մմ հաստությամբ ալյումինե թիթեղից կամ 1,5-2մմ ամուր պլաստմասե նյութից: Արկղի պատրաստման համար երկաթե դետալները պետք է բացառվեն, դրանց փոխարեն պետք է լինեն արույրից, պղնձից կամ ալյումինից պատրաստված նյութեր: Արկղի չափսերն են՝ - երկարություն 150±5մմ, - լայնություն 140±5մմ, - բարձրություն 215±5մմ: Արկղը բաժանվում է 2 մասի՝ վերին և ներքին: Վերին մասի բարձրությունը կազմում է 58±3մմ, որից 3-4մմ եզրային հատվածով փակում է ներքին մասին վերևի հատվածը: Վերին մասը ծառայում է որպես կափարիչ և ներքին մասի հետ ամրացնելու համար ընդերկայնական մի կողմում ամրացված են ծխնիներ՝ բացել և փակելու համար, իսկ ընդերկայնական մյուս կողմում ամրակված է զսպանակավոր փական: Տեղափոխելու համար տուփի ընդլայնական կողային մասերում ամրակվում են 20մմ լայնությամբ թիթեղներ, որոնց բացվածքի (անցքի) միջով անցակցվում է ուսագոտին: Տուփի ներսում՝ հատակի մասում ընդերկայնական (առաջնային) մասով՝ կենտրոնում և ընդլայնական (կողային) մասով՝ կենտրոնից 20±3մմ դեպի առջևի հատվածում ամրակված է 55±3մմ երկարությամբ և 12±0,5մմ տրամագծով գլան այնպես, որ բուսոլի խնձորակը տեղադրվի իր վրա: Գլանն ունի խոռոչ՝ պտուտակներ պահպանելու համար, որը վերևի մասից փակվում է

		ներպտոտակվող խցանով: Ընդերկայնական և ընդլայնական մեկական կողային մասերում ամրացված են դարակներ շահագործման ձեռնարկի և տեղեկամատյանի համար: Հատակի մասում կահավորվում է տեղամաս՝ սիլիկագելի սրվակի ամրացման համար: Կողային մասում ամրացվում է տեղ՝ 11մմ լայնությամբ, 85մմ երկարությամբ և 2մմ հաստությամբ բանալին ամրացնելու համար: Տուփի ներսում՝ վերևի մասում ամրակված են տեղամասեր՝ 20±2մմ տրամագծով և 45±5մմ երկարությամբ գլանաձև շողոլի տուփի, 2 հատ 100մմ երկարությամբ (փոքր չափսերի) պտուտակահանների տեղադրման համար: Կենտրոնական մասում ամրակված է թիթեղ այնպես, որ ծայրերին ամրացվեն փափուկ (ռետինե) նյութ, որը կծառայի բուսոլի ամրացման համար (բուսոլը արկղի մեջ տեղադրված և փակ վիճակում): Արկղի կողային մասերում ամրացվում է 25մմ լայնությամբ և 2000±50մմ երկարությամբ, ճարմանդով կարգավորվող, պաշտպանիչ կանաչ գույնի ամրագոտի՝ ուսին ամրացնելու համար:  Արկղը պետք է ներկված լինի կանաչ պաշտպանական գույնի ԽՎ-518 մակնիշի ներկով:

Ծանոթություն՝

1. Ապրանքների երաշխիքային շահագործման ժամկետը պետք է լինի ոչ պակաս, քան 1 տարի:
2. Ապրանքները պետք է լինեն նոր և չօգտագործված:
3. 1-ին և 2-րդ չափաբաժինների բոլոր չափսերի թույլատրելի շեղումները չպետք է գերազանցեն 2%-ից:
4. Նմուշներն ըստ անհրաժեշտության կտրամադրվեն ՀՈՒ ՀԶ և Հ վարչության կողմից՝ պայմանագրի կնքման օրվանից 15 օրվա ընթացքում:
5. Ապրանքները պետք է մատակարարվեն մատակարարի կողմից՝ ՊՆ 55565 զորամաս (Նուբարաշեն):

Հավելված N 1
N ԳՀԱՊՁԲ-21-22/2-1 պայմանագրի

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Գնման առարկայի						
Հ/Հ	անվանումը	չ/մ	քանակը	միավորի գինը	ընդհանուր գինը	մատակարարումը 2021թ. ըստ եռամսյակների, ընդ որում՝
						3-րդ եռամսյակ
1	Արկղեր (ՊԳ-1 համացույցի արկղ)	հատ	100	29500	2950000	100
2	Արկղեր (ՄՊՄ-44Մ ականանետային նշանոցի արկղ)	հատ	100	29500	2950000	100
3	Արկղեր (Հրետանային բուսոլի արկղ)	հատ	100	29500	2950000	100

Հավելված N 2
N ԳՀԱՊՁԲ-21-22/2-1 պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Հ/հ	Գնման առարկայի անվանումը	CPV կոդը	Նախատեսվում է ֆինանսավորել 2021թ. ըստ եռամսյակների, բայց ոչ ուշ, քան 10.12.2021թ., ընդ որում՝	
			3-րդ եռամսյակ	4-րդ եռամսյակ
1	Արկղեր (ՊԳ-1 համացույցի արկղ)	44611400/1	2950000	2950000
2	Արկղեր (ՄՊՄ-44Մ ականանետային նշանոցի արկղ)	44611400/3	2950000	2950000
3	Արկղեր (Հրետանային բուսոլի արկղ)	44611400/4	2950000	2950000

* Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով

ՎԱՃԱՌՈՂ
Ա/Ձ Յոլակ Գևորգյան

Յ.ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԳՆՈՐԴ
ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Ա.ՍԱՀԱԿՅԱՆ

Հավելված N 3
N ԳՀԱՊՁԲ-21-22/2-1 պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դրտս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 3.1
N ԳՀԱՊՁԲ-21-22/2-1 պայմանագրի

ԱԿՏ N _____

պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____ Վաճառողի
Գնորդի անվանումը
անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____ պայմանագրի
պայմանագրի կնքման ամսաթիվը
համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն